



# ԱԿԱՆԱՏԵՍԻ ՍՏՈՅԳ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Շարք Ա. էջ 50)

ցուած են կարիքաւորներուն: Իր հերթին, կազմակերպիչ Մարմինը ներկայ ցուցարարներէն պահանջած է անունները հիմնարկ-ձեռնարկութիւններու այն պետերուն, որոնք իրենց պաշտօնեաներուն կը սպառնան դործէ բացակայութեան համար...

## «ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿ»Ի ԱՌԱՍՊԵԼԸ

Իսկ ինչ կը վերաբերի արտասահման հասած այն տարածայնութեանց, որոնց դժբախտաբար արձագանգեց նաեւ տեղական հայկական թերթ մը, այն տպաւորութիւնը ստեղծելով թէ՛ «ահա՛ ուր որ է «Կարմիր բանակ»ը պիտի միջամտէ (մինչդեռ 1953էն ի վեր Կարմիր բանակի անունը փոխուած եւ դարձած է Սովետական բանակ), մեր ականատեսը կը վկայէ թէ Երեւանի մէջ ոչ մէկ տեղ նկատուած է անոր ներկայութիւնը, թէեւ ճիշդ է որ իրենք ալ իմացեր են բանակային միաւորներու ժամանումին մասին:

Միւս կողմէ, Սովետական բանակին միակ միջամտութիւնը կատարուած է Ղարաբաղի կարգ մը շրջաններուն մէջ եւ յատկապէս Ստեփանակերտ, ինչպէս նաեւ Աքտամ, ուր բանակայիններու զնդակով երկու ատրպէյճանցիներ սպաննուած են, մինչ երրորդ մը ծանրօրէն վիրաւորուած է: Բանակը միջամտած է այն պահուն, երբ ատրպէյճանցիներ յարձակում դործած են հայ ազգարնակչութեան վրայ եւ վիրաւորած 16 հայեր: